

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

15 փետրվարի 2013 թ.  
ք. Երևան

N 31-Ն

### Հ Ր Ա Մ Ա Ն

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԳՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 18-րդ մասով.

#### *ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝*

1. Սահմանել իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում համատիրության կազմում ընդգրկված բազմաբնակարան շենքերի վերաբերյալ գրառվող տեղեկությունների կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հ. Թովմասյան**

Հավելված  
ՀՀ արդարադատության նախարարի  
2013 թվականի փետրվարի 15-ի  
N 31-Ն հրամանի

#### Կ Ա Ձ Մ

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԳՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Համատիրությունների վերաբերյալ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում համատիրության կազմում ընդգրկված բազմաբնակարան շենքերի վերաբերյալ գրառվում են հետևյալ տեղեկությունները.

- 1) բազմաբնակարան շենքի գտնվելու վայրը («մարզ»՝ Երևան կամ մարզ, վարչական շրջան կամ բնակավայր, փողոց կամ թաղամաս, շենք) և փոստային դասիչը.
- 2) բազմաբնակարան շենքի կառուցման տարեթիվը.
- 3) բազմաբնակարան շենքի շինությունների (բնակարաններ, ոչ բնակելի տարածքներ) ընդհանուր թիվը.
- 4) բազմաբնակարան շենքի այն շինությունների (բնակարաններ, ոչ բնակելի տարածքներ)

ընդհանուր թիվը, որոնց սեփականատերերը հանդիսանում են համատիրության անդամ: